



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

**ՈՐՈՇՈՒՄ**

2020 թվականի *հունիսի 20-ի* թվականի N 176-ձ

**ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 16/4  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի կազմման համար հիմք հանդիսացող ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությունը հաստատելու մասին» թիվ 16/4 որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 17-րդ կետի 2-րդ ենթակետի և 21-րդ կետի գործողությունը դադարեցնել:
2. Հավելվածի 17-րդ կետի 3-րդ ենթակետը «ընդգրկել» բառից հետո լրացնել «բարձր և /կամ/» բառերով:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ  
ՆԱԽԱԳԱՀ

Լ. ՅՈԼՅԱՆ